



139. ՕՂՈՐՄԱԾ ԹԱԳԱՎՈՐ

Թագավոր մե ուր մեծամեծներու հետ կէրթեր նեճիր, քեֆ-ուրախութենի:

Վրր փոշոտ ճամպուն՝ խեղճ հալվոր աղքատ մե նստուկ կկղնի, որ կը տեսնա զթագավորն ուր մեծամեծներ, յոտքի գելնա, յառջև ուրանց կը կտրե, ձեռք գերկընցու, կրսե.

— Թագավոր ապրած, քու յոտաց հողն իմ, օղորմութեն մի էրե:

— Ողորմութեն,— կըսե թագավոր,— հա՛, քրդի օղորմութեն մե իտամ. գնա՛ դիմ քոշկ ու սարեն, դիմ խազնեն, դիմ էղած-չէղած վերցու քրդի, թե կոնաս:

Կրսե. բանձր-բանձր կը ծիծղա, հրտ ուր մեծամեծներուն կէրթա նեճիր. քեֆ-ուրախութենի:

